

ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ

(Շար. տե'ս «Բազմակից» 1968, ք. 4-6, էջ 144)

ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՆԵՐԿԱՅ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՁ

4. Քաղաքական հասարակութեան կեանքը

Նման նիւթի մը շօշափումը կրնար դուրս գէ հեռու թուիլ եկեղեցական ժողովի մը ձեռնհասութենէն, քանի որ վարժած ենք քաղաքական կեանքը նկատելու սոսկ իրերէ բաղադրութիւն մը դիւանագիտական խաղերու: Կը վրիպի մեր ուշադրութենէն թէ քաղաքական կեանքն ալ հիւսուածք մըն է մարդկային յարաբերութիւններու, ուր մարդկային ազատութիւնն է որ կը խաղայ. խաղ մը, որ չի սպառի դիւանագիտական ասպարէզով, կ'ընդգրկէ մարդկային կեանքի ամենակարեւոր հատուածները՝ ընտանիք, մշակոյթ, տնտեսութիւն, ընկերային եւ արուեստական յարաբերութիւններ: Այս բոլոր ասպարէզներուն մէջ, կարելի չէ խորհիլ քաղաքական գիտակից գործունէութիւն մը, որ չենթադրէ մարդաբանական որոշ ըմբռնումներ, իմաստաբարոյական տեսութիւն մը քաղաքական հասարակութեան բնոյթին, վախճանին եւ մարդուն հետ առնչութիւններուն մասին:

Այս հարցերուն շուրջ ալ՝ Եկեղեցին սկսած էր պարզել իր տեսութիւնները Լեւոն ԺԳ.ի օրերէն սկսեալ, քաղաքական կեանքին մէջ յայտնուած մեծղի փոփոխութիւններուն ընդառաջ ելլելու եւ անոնց բարոյական հուն մը գծելու նպատակով: Չենք կրնար ներկայիս հետեւիլ Եկեղեցւոյ քաղաքաբարոյական վարդա-

պետութեան զարգացումի փուլերուն՝ Լեւոն ԺԳ.ի շրջանէն մինչեւ մեր օրերը: Մատնանշենք միայն տեսանկիւններու յեղաշրջումը, որ տեղի ունեցած է այս 80 տարիներու ընթացքին: Լեւոն ԺԳ. առաջնորդուած էր իր ժամանակին տիրող համոզումէն՝ թէ հեղինակութիւնն է ընկերութեան խելութիւնը կազմող տարրը. այս հեռանկարէն տարուած՝ ամբողջ իր վարդապետութիւնը հեղինակութեան շուրջ կը կեդրոնանար:

Արտաքին ազդակներու բերումով եւ ներքին հասունութեան մը հետեւանքով, Եկեղեցւոյ ուսուցումը հետզհետէ ձերբազատուեցաւ այդ հեռանկարէն, կեդրոնանալու համար նոյնինքն քաղաքական հասարակութեան վրայ՝ իր բոլոր տեսակէտներուն մէջ դիտուած՝ իրրեւ հիւսուածք մը մարդկային յարաբերութիւններու: Ժողովական Սահմանադրութիւնը, Յովհ. ԻԳ.ի Pacem in terris (Երկրի վրայ խաղաղութիւնը) շրջաբերականին հետ, վերջին հանդիմանը կը նշեն հասունութեան այդ յառաջընթացութեան:

Ժողովը, հաւատարիմ՝ իր ընդգրկած մեթոտին, զոր ժառանգած էր Յովհաննէս ԻԳ.է, իրրեւ մեկնակէտ կ'առնէ միշտ՝ տրուած թանձրացեալ իրականութիւնը: Ինչպէս ըսուեցաւ, մարդկութեան վիճակը ճանչնալու մտահոգութիւնն է՝ որ կ'ուղղէ Ժողովին վարդապետական կառուցումը. ասիկա իրրեւ պատասխան մը

պէտք է յայտնուի մարդկութեան կարիքներուն, ո՛չ ի յառաջագոյնէ յղացուած դրութիւն մը: Կիրարկելով նոյնինքն Յովհ. ԻԳ.ի գործածական դարձուցած բացատրութիւն մը, «ժամանակներու նշաններուն»՝ հանդէպ այս դաշնութեան մէջ՝ պէտք ենք փնտռել մասամբ՝ պատճառը այն խանդավառ ընդունելութեան, զոր հանրային կարծիքը վերապահեց Յովհ. ԻԳ.ի յիշուած երկու շրջաբերականներուն:

Անոնց մէջ, վերլուծելով վերջին քսան տարիներու ընթացքին քաղաքական կեանքին մէջ երեւան եկած փոփոխութիւնները, հետեւեալ մատնանշումները կը կատարուին. ծաւալումը՝ քաղաքացիներու գործոն մասնակցութեան, քաղաքական հասարակութեան կեանքին, տնտեսա-ընկերային դեմքի վրայ՝ ընդարձակումը պետական միջամտութիւններուն, յաջորդական անհետացումը՝ գաղթականային դրութեան, մարդոց եւ աղքատներու հաւասարութեան սկզբունքին՝ դէմ տեսականօրէն դառն ընդունելութիւնը: Այս երեւոյթները աչքի առջեւ ունենալով, Տիեզերական Ժողովը կ'ուղղէ շեշտը յատկապէս անոնց յայտնաբերած մտածելակերպի յեղաշրջումները՝ քաղաքական կեանքին նկատմամբ: Երեք հիմնական յեղաշրջումներու կը վերածուին անոնք: Ա. Աւելի խորապէս զգացուած պահանջ մը բաղմամբ երկիրներու մէջ՝ ապահովելու մարդկային անձին սեփական իրաւունքներու պահպանումը. կը յիշուին յատկապէս աղատօրէն խմբուելու եւ ընկերակցելու, գաղափարի ազատ արտայայտութեան, կրօնական պաշտամունքի թէ՛ հանրային եւ թէ՛ անհատական ազատութեան իրաւունքները: Բ. Քաղաքացիներու մէջ զօրացող փափաքը՝ աւելի գոր-

ծօն մասնակցութեան մը հանրային կեանքին կազմակերպութեան: Գ. Փոքրամասնութիւններու իրաւունքները յարգելու եւ պահպանելու մտահոգութեան աճումը²:

Սակայն, այս դրական երեւոյթներով հանդերձ, պակաս չեն «Քաղաքական վարչաձեւեր, որոնք կը խափանեն քաղաքացիական ու կրօնական ազատութիւնը, ... եւ հեղինակութեան գործադրութիւնը փոխանակ հասարակաց բարիքին՝ հատուածի մը կամ նոյնինքն կառավարողներու շահերուն կը ծառայեցնեն» (Գլ. Դ, հմ. 73):

Այս վերջին խօսքերը կը յայտնեն յետադիմ ժողովրդական հասարակութեան եւ անկէ ծագող իշխանութեան վախճանը: Քաղաքական հասարակութեան պահանջը կը հիմնուի նոյնինքն մարդուն ընկերային բնութեան վրայ, եւ չէ կարելի դաշն յետամուտ տարը մը նկատել կամ ժխտականօրէն դնահատել: Մարդիկ, ընտանիքները եւ հաւաքական խմբակցութիւնները զայն կը կազմեն մշտնապէս զիտակցութենէն թէ կարող չեն առանձին իրականացնել լրիւ՝ իրենց հասարակաց բարիքը: Քաղաքական հասարակութիւնը, հետեւաբար, զոյգութիւն ունի հասարակաց բարիքին համար, եւ անկէ կը ստանայ իր ինքնութիւնը եւ միութիւնը՝ իրրեւ բարոյական նոր անձնաւորութիւն մը: Լոկ թուարկական գումարը չէ զայն բաղկացնող անհատներուն կամ խումբերուն. իրաւունքներու եւ պարտականութիւններու նոր ենթակայ մըն է՝ բարոյական միութեամբ օժտուած: Ընկերութեան խելութիւնը կազմող տարրը՝ բարոյական այս միութիւնն է համաշունչ ձգտումը դէպի հասարակաց բարին: Ժողովը չի յամեր աւելի ընդարձակօրէն վերլուծելու հասարակաց բարին ընդթը,

1. Աւետարանի մէջ այս բացատրութիւնը կը վերաբերի Քրիստոսի Բ. գալուստը կանխող նշաններուն: Յովհ. ԻԳ. զայն գործածեց նշանակելով որոշ ժամանակաշրջանի մը իւրայատուկ երեւոյթներ, որոնց մէջ կրնան նմարուիլ Նախախնամութեան կարգադրութիւնը կամ ծրագիրները այդ շրջանին նկատմամբ:

2. Փոքրամասնութիւններու իրաւունքներու մասին ընդարձակօրէն խօսած էր արդէն Pacem in terris շրջաբերականը (թ. 92-95), AAS. LV (1963), էջ 283-284: Կը յիշէր յատկապէս՝ գոյութեան, լեզուի, մշակոյթի եւ բարքերու պահպանման, ինչպէս նաեւ տնտեսական հասոյթի եւ ձեռնարկի իրաւունքները:

ենթադրելով *Pacem in terris* շրջաբերականին ուսուցումը, զոր կրնանք հետևել եղբերուն մէջ ամփոփել³ :

Ա. Հասարակաց բարին մարդուն անձնականութեան վերաբերող արժէք մըն է : Ուրիշ բառերով, մարդն է, ինչպէս կ'ըսէինք, ընկերային բոլոր հաստատութիւններուն վախճանը :

Բ. Հասարակաց բարին կարելի չէ սահմանափակել լոկ տնտեսական արժէքներու կարգին մէջ. պէտք է նպաստէ եւ դիւրացնէ մարդկային ամէն տեսակ արժէքներու ստացումը :

Գ. Հասարակաց բարին կը պատկանի եւ հաղորդական է էպպէս ընկերութեան բոլոր անդամներուն :

Դ. Հասարակաց բարին, իրեւ վախճան, պէտք է արտայայտէ համաշունչ գործակցութիւնը ամբողջ հասարակութեան :

Ե. Հասարակաց բարւոյն պահանջները կարելի չէ վերջնականօրէն սահմանել մէկ անգամ ընդ միշտ, այլ անոնք կը ներկայացնեն պատմական բովանդակութիւն մը, որ յառաջիկայական ներուժականութիւն մ'ունի :

Ուստի Եկեղեցւոյ ըմբռնումը հասարակաց բարին նկատմամբ՝ չի կընար համաձայնիլ միեւնոյնին ազատապաշտ կամ համայնատիրական ըմբռնումներուն հետ : Ազատապաշտական ըմբռնումը չի դերազանցեր անհատապաշտութիւնը, այնու որ մասնական շահերը հասարակաց բարիքի կը բարձրացնէ. իսկ համայնատիրական դրութիւններու մէջ, հասարակաց բարին կը կլանէ անհատական իրաւունքները. անհատը գոյութիւն չունի՝ եթէ ոչ իբրեւ մաս ընկերութեան : Յայտնի է որ Եկեղեցւոյ ըմբռնումը հասարակաց բարին նկատմամբ կ'արմատանայ անոր ընդհանուր տեսութեան մէջ՝ մարդուն եւ ընկերութեան միջեւ տիրող յարաբերութիւններուն շուրջ :

Քաղաքական հասարակութեան բնութեան և վախճանին նկատողութենէն՝ Ժո-

ղովը կ'անցնի քանի մը գործնական ուղղութիւններ թելադրելու բոլորին գործօն մասնակցութեան համար քաղաքական կեանքին : Հուսկ, Ժողովի ուղղութեան առարկայ կը դառնան Եկեղեցւոյ եւ քաղաքական հասարակութեան յարաբերութիւնները : Հարցը մասնաւոր այժմէականութեամբ մը կը ներկայանայ երկու պատճառներու բերումով : Ա. Կ'ապրինք ներկայիս բազմադաւան (pluraliste) եւ աշխարհականացած ընկերութեան մը մէջ, բոլորովին տարբեր միջնադարեան քրիստոնեայ եւ աստուածապետական (theocratic) աշխարհէն : Բ. Եկեղեցին այսօր իր առջեւ չունի պետութիւն մը՝ որ ժամանակին կ'անձնաւորուէր ամբողջապէս մէկ անհատի մը մէջ, այլ պետութիւն մը՝ որ կը յօդաւորուի բազմութիւն մարմիններու եւ հաստատութիւններու յարակցութենէն :

Այս կացութեան առջեւ, Ժողովը կը թելադրէ նախ՝ յաւ դանդաղել հաւատացեալի մը կամ հաւատացեալներու պարագան՝ երբ կը խօսին կամ կը գործեն իբրեւ քաղաքացի անհատներ, իրենց քրիստոնէական խղճին համաձայն, բայց իրենց անձնական անունով, եւ ընդհակառակը՝ երբ կ'արտայայտուին Եկեղեցւոյ իսկ անունով՝ Անոր Հովիւներուն հետ շփումի մէջ : Նկատելի է որ այս դանդաղութիւնը կը զօրէ նաեւ Հովիւներու նկատմամբ՝ երբ կ'արտայայտեն անձնական կարծիք մը. ո'չ ոք իրաւունք ունի դայն ներկայացնելու իբրեւ ընդհանուր Եկեղեցւոյ տեսակէտը :

Երկրորդ, Ժողովը կը հաստատէ Եկեղեցւոյ դանդաղութիւնը՝ քաղաքական հասարակութենէն եւ քաղաքական դրութիւններէ : Ասոնցմէ ո'չ մէկուն հետ կըրնայ նոյնանալ կամ կապուիլ : Այս դանդաղութիւնը եւ չէզոքութիւնը կը հիմնուին Եկեղեցւոյ առաքելութեան ամբողջապէս գերբնական բնոյթին վրայ, որ երկրաւոր ո'չ մէկ շահ կը հետապնդէ. չէզոքութիւն մը, որ չի նշանակեր անշուշտ

3. Հմմտ. AAS. LV (1963), pg. 272-273.

անտարբերութիւն՝ մարդկային իրաւունքներու եւ բնական օրէնքին հակառակող դրութիւններու հանդէպ : Եկեղեցւոյ այս դանդաղութիւնը քաղաքական հասարակութենէն՝ իր հետապնդած վախճանին գերբնականութեան պատճառով, ապահովութեան լաւագոյն երաշխիքն է մարդկային անձին վերանցական (transcendant) արժէքին : Եկեղեցին եւ պետութիւնը ո'չ միայն կը դանդաղանուին իրարմէ, այլ նաեւ օժտուած են ամբողջական ինքնավարութեամբ իրենց սեփական ասպարէզին մէջ : Երկուքն ալ, թէեւ տարբեր տիրոջանքով, կը ծառայեն մարդուն անձնական եւ ընկերային կոչումին իրաւործումին :

Ընդունելով հանդերձ թէ Եկեղեցին իր առաքելութեան կատարումին մէջ կը կարօտի երկրաւոր իրերու, Ժողովը կը յա-

րէ թէ Ան չ'ուզեր իր յոյսը դնել քաղաքական իշխանութենէն ընձեռուած առանձնաշնորհութիւններու վրայ. մանաւանդ թէ կը յայտարարէ որ Ան պիտի հրաժարի՝ օրինաւորապէս ստացուած որոշ իրաւունքներէ, երբ տեսնէ թէ անոնց գործածութիւնը տարակոյս կ'արժարժէ իր դիտաւորութիւններուն անկեղծութեան մասին : Միակ իրաւունքը՝ որմէ Ան չի կրնար հրաժարիլ, իր հաւատքը եւ վարդապետութիւնը քարոզելու իրաւունքն է. որովհետեւ այդ հրաժարումը պիտի չգրգռէր միայն Քրիստոսի պատգամին, այլ պիտի վնասէր նոյնինքն քաղաքական հասարակութեան բարիքին :

Հ. ԼԵՒՈՆ ԶԵՔԻՆԱՆ

(Շար. 6)

ՀԱՅԵՐԸ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ՄԷՋ

Հայերու վիճակագրական տուեալներու կարգին, նկատի չեն առնուիր Հունգարիոյ մէջ բնակող Հայերը եւ անոնց մասին խօսք ընողին՝ անմիջապէս դիտել կը տրուի որ հունգարահայերը՝ հայերէն բառ մը չեն գիտեր, ուստի կարելի չէ դանդաղ Հայեր համարել : Այսպիսի պարագաներուն միտքս կու գայ հունգարահայ գրագէտի մը, Պարանյայի էլէմէրին մահուան առիթով ըսած խօսքերը : Հունգարահայերը, կը գրէ, տարօրինակ Ժողովուրդ մը նկատելու է, իրենց սովորութիւններով, իրենց լեզուով որ բոլորովին հունգարացի դարձած է, սակայն

անոնք՝ լեզու չունեցող Ժողովուրդներու նման կ'ապրին իրենց սեփական կեանքը, միշտ մեծ յարգանք տածելով այն ամէն բաներու հանդէպ՝ որ իրենց նախնիքներու յիշատակը կ'արթնցնեն :

Այս տեսակէտով, հունգարահայ Ժողովուրդին պատմական անցեալը՝ ո'չ Սովետական Հայաստանի, ո'չ Սփիւռքահայ համայնքին եւ ոչ իսկ հունգար Ժողովուրդին ծանօթ է, քանի որ հրապարակի վրայ՝ Ժողովրդականացած տեղեկութիւններ կը պակսին անոնց մասին :

Հունգարահայ կը կոչուի միայն 1672ին Թրանսիլվանիոյ մէջ հաստատուած՝ Հա-